

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Օրովառաբեր թուր յերկրագիտութեան

Կ. ԳԱՐՈՂԻՆ

ԲՈԼՈՐԻ ՄԵԿ

(901,875000000 04,000 90,8104,000 000
ԹՌ 901,875000000 04,000)

ՎԻՃԱՊՈՏԷԿԱ
ԻՆՍԻՏՈՒՊ
ԽՈՏՈԽՈՎԵԴԵՆԻԱ
Ակադեմիա Խուժ
СССР



ՀՐԱՄԱԿԱՊՐԵՑԻՆ «ՀՅՈՒԽԻՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՈՒԽՈՎ-ԴՈՒ

1932 թ.

338.1

9-36

CA 33-K
590 338.1
 9-36

FEB 2010

Պրոլետարիատ բար յերկրների, միացե՛ք

ԿԱՐՈՒՆԻ

ԲՈԼՈՐՍ ՄԵԿ

(ԿՈՂՑՆՑԵՍՈՎԿՈՆ ՈՎԵՍԻ ՊԱՏՄՈՅՆԵՐԻ ԴՐ ԿՈՂՑՆՑԵՍՈՎ-
ԹՅԱՆ ՄԱՍԻՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒՏԱ
ԽՈՏՈՎԱԾԵՆԻ
Բազմաթիվ
Հայոց Խոհ
СССР

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒԽԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՈԽՈՏՈՎ. ԴՐԱ
1932

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Խորհրդային իշխանությունը վերջ տվեց հողի մասնավոր սեփականությանը, խոշոր հողատերերի, կարվածատերերի հողերը խլեց և հանձնեց աշխատավոր հողազուրկ գյուղացիությանը: Մեր յերկրում, համեմատած յերպական յերկրների հետ, գյուղատնտեսությունը չափազանց հետամնաց եր, գյուղատնտեսական խոշոր մեջենաներ շատ քիչ կային մեր յերկրում: Ին կարգերի որով գրանք, մատների վրա կարելի եր հտմարել: Դրա համար ել ճենց խորհրդային իշխանությունը ահազին ուշաղղություն և գարձնում մեր յերկրի գյուղատնտեսության զարգացման վրա, սկզբում արտասահմանից ներմուծելով գյուղատնտեսական խոշոր մեքենաներ (արակառոր, կոմքայն և այլն), այնուհետև կառուցելով հսկա զործարաններ (Ստալինգրադում, Լենինգրազում, Խարկովում և այլն), վորոնք որական հարյուրներով արակտորներ, կոմքայններ և այլ գյուղացի մեքենաներ են տալի սմեր յերկրին. մյուս կրղմից խորհ. իշխանությունը աշխատում է բարձրացնել գյուղացի աշխատավորության կուլտուրական մակարդակը, գյուղատնտեսական գլանիքներով զինել նրանց, վոր հողը մշակեն նոր ձեռքով, անցնեն բազմադաշտյան սիստեմին, հանգային պարարտացման և այլն:


Բայց Խորհրդային Միության այս բոլոր հեռնարկումներն իրավործել հազարավոր մանր-մուլնը անտեսությունների սեջ չափազանց դժվար և և անհնար. մի կամ յերկու հեկտարից քաղկացած առանձին տնտեսությունները տեխնիկական հարմարություններ չեն տալիս նըման միջոցառութենքն իրագործելու. ուժերի շլատեմն և առաջ գալիս: Բացի զրանից մանր անտեսություններն առանձին-առանձին անկարող են բնության զեմ պայքարելու, կամ բնական աղիտներից ստացած կորուսոց վերացնելու: Յեթ ահա խորհրդային իշխանությունն իրեն առաջարկած գյուղատնտեսական սիջոցառումները կյանքում կիրառելու համար միաժամանակ աշխատում ե, վոր չքափոր և միջակ աշխատավոր գյուղացիները միանան, խոշոր կոլեկտիվ տնտեսություն կազմեն՝ հարյուրավոր, հապարավոր հեկտարներով, վորոնց վրայով անարգել առաջ զնան արականիքն ու կոմբայնները և հնարավոր

ինի հողը մշակել գյուղատնտեսական դիտելիքների վերջին խոսքե համաձայն: Առաջին հնգամյակի ընթացքում արդին մեր յերկրում կուլեկտիվացման թափը ուժեղ կերպով առաջ գնաց, անցնելով նախատեսված տոկոսներից: Առաջվա անհատական արորների և գութանների տեղ տրակտորն ե փնչում, կոլեկտիվի կոմբայններն են հաղթական արշավում. ընտանեկան հոգսերով, պարտքերի տակ թաղված չքափոր կամ միջակ գյուղացու լուս ու հուսահատ միայնակ աշխատանքն ե յեռում, ուրախ ու զվարթ, աշխատում կոլեկտիվ աշխատանքն ե յեռում: Դասակարգային թշնամու ամեն տեսակ պրովակացիան, ամեն տեսակ ստատանայական դափերը, վասարարությունները և այլն անզոր յեղան կոլեկտիվացման ուժեղ թափը կասեցնելու կոմկուսի լենինյան ճիշտ քաղաքականությամբ ու նրա զեկավարությամբ մեր յերկրի չքափոր և միջակ գյուղացի աշխատավորությունը, կուլակների զեմ անինա պայքարում, ամենուրեք համատարած կոլեկտիվներ են կազմել և զրա հիման վրա վերացրել կուլակներին վորպես դասակարգ:

Նման համատարած կոլեկտիվ տնտեսություններ կազմել ե արդին 1929 թվից Սոչիի ույոնի ծխախոտագործ չքափոր և միջակ աշխատավոր գյուղացիությունը: Այդ կոլեկտիվ տնտեսություններ կազմվելով զասակարգային թշնամու զեմ համառ պայքարում, ուժեղ զանալով կազմակերպչական կերպով, ամրանալով տնտեսապես և վերացնելով կուլտուրապես հետամնացությունն ու հիմ կենցաղի մասորդները, կոմունիստական կուսակցության զեկավարությամբ կոլեկտիվ աշխատանքով զիմում են զեպի սոցիալիզմը:

Սոչիի ույոնի կու զյուղինորհրդի կոլտնտեսություններից մեկի պատմությունն ե տրված այս զբում, վորաեղ կոլտնտեսական Ովեսը պատմում ե, թե ինչպես նրանք հողի ոգտագործման անհատական ձերից անցան հողի մշակման կոլեկտիվ սիստեմին:

Հանք ուրեմն կոլտնտեսական Ովեսին:



58325-67

շնորհիվ «հեռավոր ազգական» բարեկամի, որ կերպ ապրելու հնարա-
վորություն եւ ունեցել:

II.

Ի Այս մի քանի տարվա ընթացքում մեր կյանքն այնպիսի հակա-
յական քայլերով առաջ զնաց, մեր տնտեսության ձևն այնպիս բա-
րեփոխվեց, վոր դարձանում ես, թե՝ մի՞թե այս բոլորը կատարվեց
այնքան արագ: Մեր կուտնատեսության մեջ այնպիսի տրամադրու-
թյուն կատանամ՝ կարծես տաճայակ տաքիներ ե, վոր կուեկտիվ աշ-
խատանքը տիրապետում է այստեղ: Բայց յեթե մի ակնարկ ձգես-
դեպի անցյալը, կտեսնես, վոր ներկայումս կուեկտիվ աշխատան-
քով առաջ գնացող մեր գյուղը շահագործման, սուր կարիքի և չքա-
վորության մեջ ե յեղել մոտ անցյալում:

Թագավորի ժամանակ այստեղ բոլորը ժամանակավոր կենողներ
եյին, վորոնք՝ մեծամասնությամբ Տաճկաստանից գաղթելով, անտա-
նելի ծանր պայմաններով վեցցրել են տնտառները կապալով և բա-
ցել ու ոդտագործել են, վճարելով ճեկտարին սինչև հարյուր ոռոքի
կապալավորձ հողատեր «կնյաղին», վոր քրիստոնյարար «հյուրընկա-
լելով» Տաճկաստանից յեկող հայերին, սրանց իրավունք չեր տալիս
հիմնական տնտեսություն վարելու: «Կնյաղը իրավունք չեր տալիս
պարզաբան մի ծառ անգամ անկելու և կապալի ժամանակամիջոցը ամե-
նաշատը 6 տարուց ավելի չեր լինում. թեև քիչ եր պատահում, վոր
«կնյաղը», պայմանաժամկը չըրացած, տեղահան չիներ այս կամ այն
տնտեսատիրոջ, ինչ յերկնցնեմ. շատ գժվար եր մեր գյուղացիության
ապրուստը: Համենայն գեպս ուներները կարողանում եյին «կնյա-
ղի» առանձին բարեհաճ վերաբերմունքը վայելել և ապրել ավելի նը-
պատավոր պայմաններում. ինչ վոր լինում եր, չքավորներին եր լի-
նում, վորոնց վիճակը չափաղանց աննախանձելի եր և վորոնք, ինչ-
պես ասում են, ծառայում եյին «յերկու տերանց». թե «կնյաղին»
եյին վճարում կապալավարձ և թե գյուղի ուներթաղաներին՝ սրանց
յեղը կամ ձին աշխատեցնելու համար:

Հենց մեկը յես. ի՞նչ կյանք եմ վարել այն որվանից, յերբ 1909
թվին վոտք դրի Ռուսաստան (յես ի՞նքս Տաճկաստանի Տրապիզոնի
վելայեթից եմ). ե՞ն, ինչ չարչարանք եմ քաշել, ինչ նեղություննե-
րի մեջ եմ մնացել «բարեկաշտ» թագավորի յերկրում, մինչև վոր

— Տես, շան վորդի, աշխատելու յեկար, թե ձրի հաց ուտելու-
զոնե կերածդ հացի չափ աշխատանք արա, այսորվա աշխատանքդ մի
զբոշ ել չարժե, — հաճախ կլսեյի իմ «հեռավոր բարեկամի» նման ար-
տահայտությունը: Մինչեւ ամեն օր չափից դուրս աշխատելուց ու-
ժամանակ եյի լինում, այդ լավ զիտեր իմ «հեռավոր բարեկամը»,
բայց զիտամբ նսեմացնում եր իմ աշխատանքը, վոր յես տարեկեր-
շին պահանջկոտ չլինեմ. մյուս կողմից՝ իրեն բարեգործ և զիհանձն
եր ուզում ցույց տալ, այսինքն՝ թե՝ «թեև զու չես աշխատում, ինչ
պես վոր հարկն ե, բայց յես, տեսնում ես, համենայն դեպս քեզ կե-
րակրում եմ».., և այլն:

Ոեղճ Ովեսիս ճարն ինչ եր. լեզու չգիտեյի, միջոց չունեյի և
վոր կարևորն ե, բացի իմ «հեռավոր բարեկամից», ուրիշ հեռավոր
կամ մոտիկ բարեկամ չունեյի: Յեվ այսպես+անձար աշխատում եյի
ուներ Գորդ Սարգսյանի մոտ, վոր ամեն թեսլիմին (տարեկերշին
ծխախոտը հանձնելուն) ինձ համար մի ձեռք եժաննոց շոր եր կարել
տալիս ու մի տասը.քսան ուրեմն ձեռաց ծախսի փող եր տալիս և այդ-
պիսով փակված եր համարում իմ աշխատավարձի հաշիվը. տեսած ու
տեսնելիքս այդ եր:

III.

Այսպես շարունակվեց 4—5 տարի. կլինեյի արդեն 25—26 տարե-
կան: Մի օր իմ «հեռավոր ազգականին» հասկացրի, թե ախը այսպես
չի լինի. աշխատում եմ, աշխատում, իսկ տակը վոչինչ չկա. վոչ՝ ամ-
սական, վոչ՝ տարեկան:— Գոնե այսուհետև մի բան վորոշենք, — ասա-
ցի յես, — վարձատրության մի չափ դնենք, վոր զբա համեմատ ել աշ-
խատեմ:

Ի՞նչ եք կարծում. իմ «հեռավոր ազգականը» (ի զարժանու իմ) խկույն ընդառաջ գնաց իմ ասածին և առաջարկեց ինձ՝ այսուհետև իր մոտ աշխատել վորպես Շուշտեծի (հասույթի յերրորդ մասի համար աշխատող), վորպիսի ձեն այդ ժամանակները կոոյում շատ եր տարածված։ Յես ուրախացա, պայմանը կապեցինք (բերանացի, մի քանի հոգու ներկայությամբ)։ Այսուհետև յես աշխատանքին կպա կրկնապատկած թափով. չե՞ վոր յես նույնպես շահագրգոված եյի տնտեսության յնկամտի բարձր լինելով։ Ծխախոտի 4—5 փթանոց կալաթները (քթոց) շալակուծ արտից մինչև մարտագն եյի բերում կտրելով 1 և կես, 2 վերսու տարածություն։ Ինչ ասեմ, աչքովդ պիտի տեսնեմ, վոր իմանայիր, թե ինչպես ծանր եր իմ աշխատանքը, ինչպես ամեն անդամ հոգիս բերանս գալով անում եյի ծխախոտի մշակտան ամեն մի աշխատանք. հաճախ անձրեկ տակ, վոտաբորիկ, գիշեր-ցերեկ, առանց հանգստի որի։

Տարեփերջին աղաս («հեռավոր բարեկամու») ծխախոտը հանձնելուց և դրամը գրանը դնելուց հետո, ինձ հետ հաշվի նստեց։ Յես ափս թերելով և մի կորիրկ գումար ստանալու ակնկալությամբ նըստած սպասում եյի։ Յեկ ի՞նչ. լիոք մուկ ծնեց։ Ծխախոտի ամբողջ արժեքից՝ 2000 ռուբլոց ինձ բաժին եր ընկնում 700 ռուբլի. բայց հենց այդ բայցը վիշացնում եր ամեն ինչ։ «Բարեկսիրտ» աղաս ամենայն ճշտապահությամբ հաշվում եր այն բոլոր ծախսերը, վոր նա արել եր իր անտեսության մեջ և վոր սակայն չեյին վերաբերվութը ընդհանուր գործին, հաշվում եր իմ կերած-խմածի փողը, շրերս լվանալու փողը և այլն, այնպես վոր տակը մնում եր մի չնչին գումար 150 ռուբլու չափ։ Նեղացա, մինչև անդամ հայհոյեցի (մտքումս), բայց ի՞նչ արած, ելի շարունակեցի աշխատել ծիշտ ասած՝ վորոշ չափով կապված եյի «հեռավոր ազգականիս» հետ, ուզում եյի ամուսնանաբ իսկ իրա մեծ տղջիկը՝ Լուսիկը անտարբեր չեր գեղի ինձ. աղաս գիտեր այդ բանը և դա մի դենք եր նրա ձեռքին։ Ամեն անդամ, յերը յես ջղայնացած՝ իր մոտից հեռանալու տրամադրություն եյի ցույց տալիս, նա կողմանի կերպով հասկացնում եր։

— Կիեռանաս, բայց լուսիկիս չեմ տալ քեզ։

IV.

Մի յերկու տարի յել այդ հույսով չարչարվեցի, մինչև վոր Լուսիկին ամուսնացրին։ Յես հուսախաբ պատրաստվում եյի հեռանար, խորամանկ հնեւավոր բարեկամու կողմանի մարդկանց միջոցով համոզեց ինձ, վոր չեռանամ։

— Այս աշուն, Ովես ջան, ինչ դնով ել լինի, քեզ կայսունացնենք ու տուն տեղ կշինենք, — առաց մի անդամ աղաս։

Յեկ իսկապես, այդ աշնանը նա ամուսնացրեց ինձ հարեան Աթաման Թորոսի աղջկա հետ, շնորհ քով հարսանիք ել արավ. «Հեռավոր ազգականիս» տնից վոչ հեռու մի փոքրիկ տնակ շինեցինք և այդ որվանից յես գարձա ինքնապլուխ տնահսատեր։ Սկզբում շատ ուրախ եյի, վոր ազգատվեցի աղայի ձեռքի տակ աշխատելուց. բայց այդ յերկար չտեսեց. ախր առանձին տնահսատթյուն վարելու վոչ յեզ ունեցի, վոչ գութան և վոչ ել փող. ելի ստիպված եյի «հեռավոր ազգականիս» գլուխ ծոելու. նա ամենայն ուրախությամբ հանձն առավ իմ մեկ հեկտար հողը վարելու, տափանելու, վորի փոխարքեն ես մասամբ իմ ընտանիքով պիտի աշխատեյի նրան և մասամբ՝ ել ծխախոտ հանձնելուց հետո՝ փողով պիտի վճարեյի։ Ինչ յերկնցնեմ, ելի մնացի իմ «հեռավոր ազգականից» տնահսապիս կախված։ Մարդ ու կնիկ աշխատում եյինք և հազիվ եյինք կարողանում ապրել Թարսի պես իմ «հեռավոր ազգականը» աշխատանքի ամենայեռուն ժամանակը մեկ ել տեսար՝ կվանչեր. — Ովես, եղուց Աննայի հետ (կնոջս հետ) յեկեք մեղ ծխախոտ կոտրելու։

Չես կարող չգնար վորովհետեւ մարդը պայման և դրել՝ «արտղ հերկեմ, բայց իմ ուղած ժամանակ պիտի աշխատես ինձ համար։ Գնաս, աշխատանքի ամենատաք ժամանտկը ծխախոտդ առանց քաղերու կմնա, կիշանա կամ վորակը կկորցնի։

Այդպես՝ ոգոստոսի շոգ ուրեից մի որ, իմ «հեռավոր ազգականը» ինձ ու կոնցս աշխատեցրեց ի հաշիվ իմ պարտքի. և գիտե՞ք ինչ... այդ տարի իմ ամենալավ ծխախոտը արտում մնաց և այդ զիշեր իմ քոռ բախտից ավեց կարկուալ և գետնին հավասարեցրեց իմ ծխախոտը։ Այդ տարի յես խրկիցի պարտքերի մեջ և այնուհետև յերկար ժամանակ չկարողացա մեջքս շտկել. մինչդեռ իմ «հեռավոր ազգականը» են տարին «հրաշալի» ծխախոտ ունեցավ։

V.

Այսպիս շարունակվուժ եր իմ չարքաշ, չքավոր կյանքը, մինչև խորհրդային կարգերի հաստատվելը։ Յերբ իշխանությունն անցավ աշխատավորության ձեռքը և վերջ տրվեց շահագործողների իշխանությանը, իմ «հեռավոր ազգականի» աստղը թեքվեց, ամեն ինչ արդեն նրա քեփովը չեր լինում։ Խորհրդային կարգերը ամեն կերպ պաշտպանում եյին չքավոր գյուղացիությանը հարուստների — կուլակների շահագործումից։ Մեր գյուղում կազմվեց փոկ (փոխադարձ ոգնությած կոմիտե), վորի ոգնությամբ յես տեղ դարձա մի լուծք յեղան և սկսեցի բոլորովին անկախ վարել իմ տնահսատթյունը։ Այս բոլորը ամենեին դյուր չեր գայիս աղայիս, վոր սովոր չեր աշխատել, այլ միջտ ել ուրիշի վաստակն եր գրպանում նա ամեն որ հաջործում եր

խորհրդային կարգերը, վոր այդպես շուռ եր տվել իր բախտը։ Իսկ մենք՝ չքավորներս ուրախ եյինք, վոր, վերջապես, խորհրդային իշխանության շնորհիվ ազատվել եյինք ուրիշի առաջ վիզ ծոելուց և անխնա շահագործվելով՝ չարքաշ կյանք վարելուց։ Բայց, համենայն դեպքում, մենք՝ չքավորներս ու աշխատավոր միջակ գյուղացիությունն առանձին-առանձին չեյինք կարողանում մեր փոքրիկ տնտեսություններն ուժեղացնել, տնտեսապես ամրանալ և մեր ուժը հակադրել կուրկներին, վորոնք աշխատում եյին մեզ տնտեսապես իրենց յենթարկել, իրենց ուղածն անձն զյուղում մեղ հաջողվում առանձին առանձին պայջարել կուլակի դեմ, և այդ հանգամանքից ոգովելով, կուլակը հաճախ մեկիս կամ մյուսիս յենթարկում եր իր աղջեցության ևս անտեր ծխախոտն ել թղթախաղի յե նմանում. թե ժամանակին մշակեցիր, առանց կարկուտի հավաքեցիր, մի բան կտեսնես, թե չե՛ առանց կողեկի կմաս, պետությունից ստացած վարկերն անդամ չես կարող վերադարձնել։ Այսպիսի գժվար և անել դրությունից գուրա գալու միակ միջոցը կողեկտիվ կազմելն եր և կողեկտիվ աշխատանքով տնտեսություն վարելը։

V.

Մինչև 1929 թիվը մեր կոոյի գյուղիսրդում կային յերկու կողեկտիվ տնտեսություններ. մեկը՝ 26-ի անվան կոլտնտեսությունը, մյուսը՝ «Հաղթանակող» կոմունան. Դյուղկուսկոմի, զյուղիուրիդի կողմից մեր գյուղն յեկող ընկերները թե մեղ հետ զրուցելիս, թե ընդհանուր ժողովական մեջ այն միտքն եյին արծարծութ, վոր մոր տնտեսական դրությունը լավացնելու, կուլակների վատնձությունների գեմ պայքարելու և նրանց ուժը կոտրելու միակ միջոցը, դա կողեկտիվ կազմելը և աշխատանքի կողեկտիվ ձեւերին անցնելն և. Ամեն մի նման դեպքում յես պատրաստ եյի լինում իսկույն յեկ յեթ գրվել կոլտնտեսությունում. տեսնում եյի, վոր մեր հարեան «26-ի անվան» կոլտնտեսությունում կողեկտիվ աշխատանքն ավելի լավ ե, ավելի հեշտ ե, ավելի արդյունավետ ե. զործնականում համոզվում եյի կուսակցական ընկերների ասածին. բայց պետք ե ասեմ, վոր եդ կուլակներն ել իրենց հերթին աշխատուս եյին շփոթեցնել աշխատավոր գյուղացիությանը։ Ոգտվելով մեր տղիտությունից, նրանք ամեն տեղ սրտ ու կեզծ պրովակացիաներ եյին տարածում ժողովրդի մեջ կոլտնտեսությունների մասին, թե այնտեղ աշխատողներն իրենց աշխատածի տերը չեն, թե ընտանիքը վերանալու յե, բոլորը մի վերմակի տակ են քնելու, թե յերեխաներին խլելու յեն ծնողներից և չգիտեմ ուր են ուղարկելու և այլ նման հրեշտային սուտեր, վորից աղդվում եյին շատերը։ Կուլակային տարրերն

իրենց հակակոլտնտեսային աղիտացիան առանում եյին գլխավորապես կանանց մեջ. ոգտվելով նրանց համեմատարար ավելի հետամնացությունից ու հին կենցաղին կապած լինելուց, վախեցնում եյին նրանց, վոր կոլտնտեսությունում ընտանեկան բոլոր սրբությունները վունակով են լինելու, կանացք համայնացվելու յեն, վոր այստեղ միայն կանանց են աշխատացնելուն այլն։ Ինչ խոսք, վոր կանանցից շատերն ընկնում եյին կուլակների լարած թակարդը և աղդում նակիրենց ամուսինների վրա։ Յես և մի քանի ընկերներ սակայն մտադրվել եյինք, ինչ գնով ել լինի, կազմել մեր գյուղում կողեկտիվ տնտեսություն։

VII.

Այսպիսակ 1929 թվի հոկտեմբերը. մեր ռայոնում անց եր կացվում հողաշինարարություն և յուրաքանչյուր գյուղ և տնտեսություն վերջնականապես պետք և ստանար ըստ որենքի իրեն հասանելիք հողը։

Հենց այդ նպատակով 1929 թվի հոկտեմբերի սկիզբներին լոռ յեկան կուրքջիկից՝ ընկ. Վարդանյանը և հողաշափ Պուտյովկինը, վորոնք ընդհանուր ժողով գումարելով, խոսեցին, բացատրեցին հողաշինարարության մասին։ Ընկ. Վարդանյանը սկսեց խոսել այն մասին, թե ինչ արտօնություններ են տրվում կողեկտիվ հողաշինարարության ժամանակուի։ Նա խոսեց աշխատանքի կողեկտիվ ձեւի առաջարկությունների մասին և կոչ արագ չքավոր և միջակ գյուղացիությանը միանալ, կազմել կողեկտիվ և միացյալ ուժերով առաջ տանել գյուղատնտեսությունը։

— Կողեկտիվ աշխատանքի ժամանակ կվերանան բոլոր այն դժվարություններն ու հոգսերը, վոր միշտ ել ունի չքավոր և միջակ տնտեսությունը, կողեկտիվ աշխատանքով չքավորն ու միջակը ավելի հեշտ կալացարեն կուլակի դեմ և ավելի հեշտ կհաղթահարեն բնության, — ասում եր ընկ. Վարդանյանը։

Այսուեետե խոսեց մեր կոմիտեի ընկ. Վահանը, վորը գյուղացիության համար հասկանալի ինդվով խոսեց հոգուտ կողեկտիվ կազմելուն. խոսեցի յես, վորքան վոր կարողացա, իմ կարճ խելքով գտա, վոր հատկապես մեղ՝ չքավորներին համար անհրաժեշտ և կողեկտիվը՝ մեր խոսեց հողաշափ՝ Պուտյովկինը։

— Մինչև 5—7 տնտեսություն կարող եք միանալ և կազմել մի կողեկտիվ, կչափեմ մի ընդհանուր հողամաս, վարի վրա գոււք կաշատեք կողեկտիվ կերպով։ Հողաշափի այս խոսքերի վրա մեր գյուղացիներն սկսեցին յերկրադական նշանակություն ունեցող հարցեր տալ, թե այդիներն հապա ինչ են լինելու, թե հասույթին ինչպես պիտի բաժանեն, թե յեթե կողեկտիվ աշխատեն, միասին ել, մեկ ամանից ուտելու յեն, թե՝ վոչ և այլ նման հարցերը. այս բոլոր հարցերին

թե ընկ, Վարդանյանը և թե հողաչափը սպառիչ պատասխաններ տվին:

Մի քանիսի սրտովը չեր այս բոլորը՝ մանավանդ իմ հենուավոր աղջականս ու իր նմաններն այդ ըովելին, չեյին կշանա հողաչափին, վոր «մեր քառասուն տարվա տնտեսության ձեն ուզու եր փոխել»:

— Քո ի՞նչ գործն ե կոլեկտիվը ու մեկալը, — մտածում եյին նըրանք. — ամեն մարդու իրեն հասանելիք հողը չափիր, կտրիր տուր իրեն, պրծավ դնաց:

Շատ յերկար խոսվեց, այդ իրիկունը: Դրեթե լուսանու եր, յերք ցրվեցինք: Մի վերջնական վորոշումի չեկանք, բայց մեր գյուղում կոլեկտիվ կազմելու միտքը հասունանում եր:

Հետեվյալ որը կոմյերիտ բջիջն իր ընդհանուր ժողովն եր գումարել գպրոցում: Որը կիրակի յեր, ուստի մեծ բազմություն կար: Միր դպրոցի ուսուցիչ կոմյերիտական ընկ. Մինասի զեկուցումից հետո, ընդհանուր ժողովը բազմակողմանի քննարկում եր կոլեկտիվ կազմելու խնդիրը: Թնդետ մի քանիսը հակառակ եյին խոսում, վոր իրը շայդ գործը մեր գյուղում իրականացնելը չափազանց դժվար ե», բայց կոմյերիտական բջիջը մեծամասնությամբ վոգեվորված եր և ի վերջո միաձայն վորոշում կայացրին շամեն կերպ աջակցել մեր գյուղում կոլեկտիվ տնտեսություն կազմելուն՝ լայն բացատրական աշխատանք առանելով դյուղացիության մեջ, զրույցների և զեկուցումների միջոցով համոզել ծնողներին, վոր կոլեկտիվ կազմելը: կերպեավի մեր զրությունը, հիեշտացնի մեր ապրուստը, կըարձրացնի մեր բերքատվությունը: Այդ ժողովում մեր կոմյերիտականներն ընտրեցին յերեք հոգուց բաղկացած մի հանձնաժողով, վորը այդ որվանից գործի պիտի անցներ: Ըստրվողներից մեկն ել կոմյերիտ Վահանն եր, վորն այսուհետեւ մեր կոլտնտեսության ամենայեռանգուն, ամենաակտիվ և ամենապօքնյա անդամներից մեկն եր:

Այդ որը ժողովից հետո կոմյերիտ Վահանը և հանձնաժողով մյուս անդամները տունետուն ման եյին գալիս. բոլոր չքավոր և միջակ գյուղացիությունը համոզելու, վոր կոլեկտիվ կազմեն. շատերից միայն 11 տուն համաձայնվեցին: Հետաքրքրականն այն ե, վոր իւ հենուավոր աղջականն» ու իրեն համախոն մի յերկու հոգի նույնապես շրջում եյին գյուղը և հակակոլեկտիվիտական մտքեր քարոզւմ: Կոմյերիտ բջիջը սրանց արարքը մերկացրեց և մի լավ խայտառակց: Նույն յերեկո ունեցանք կազմակերպչական ժողով և կազմեցինք մեր գյուղում 11 տնից բաղկացած մի կոլեկտիվ «Կարմիր ապագա» անվան տակ:

Ճիշտն ասած, յես չեյի կարողանում լավ պատկերացնել, թե ինչպես 11 տուն միասին պիտի աշխատենք. այդ Շնկառ տնտեսու-

թյունն ով պիտի զեկավարի և այլն, բայց հոգով համոզված եյի, վոր կոլեկտիվ աշխատանքն ավելի մեծ արդյունք կտա: Յերեք հոգուց բաղկացած մի վարչություն ընտրեցինք, և մեր ժողովի արձանագրության պատճեն տվինք հողաչափին, վորի հիման վրա նա մեզ համար ընդհանուր հողամաս կտրեց, և մենք անցանք կոլեկտիվ աշխատանքի:

VIII.

1929 թ. հոկտեմբերի 14-ը կոլեկտիվ աշխատանքի առաջին որն եր մեր գյուղում, այդ որը 11 զույգ յեղ միասին եյին աշխատում. ծխախոսի տեղ եյինք հերկում: Դրեթե ամբողջ գյուղը հավաքված եր ցանկապատի մոտ՝ կոլեկտիվ աշխատանքը դիտելու համար: Կոլեկտիվ աշխատանքի առաջին որն անցավ շատ լավ, այդ որն ամեն մի զույգ յեղան կատարած աշխատանքը սովորականից յերկու անգամ ավելի յեր: Այդպես անցավ յերկրորդ, իրրորդ որը, աշխատում եյինք առանց ներքին կանոնադրության, առանց նախորոք կազմած արտադրական պլանի. մի խոսքով նոր բան եր մեզ համար կոլեկտիվը, աշխատում եյինք բոլորս միասին, աշխատում եյինք կոլեկտիվ կերպով: Մեզանից մեկին հանձնարարեցինք հաշիվ պահել. թե ով, վորքան և աշխատում: Սկզբում մեր «Կարմիր ապագան» իրենից ներկայացնում եր հողի ընդհանուր մշակման ընկերություն. հաշվի յեր առնվում, թե ով և վորքան աշխատեց, ում յեզր և վորքան աշխատեց. մարդու յեզր յեղան համար առանձին առանձին որավարձ եր նշանակված: Գործերը լավ եյին առաջ գնում, նախագահը ռայոնում հաստատել եր տվել մեր ընկերությունը և մինչև անդամ վարկ եր ստացել թե փողով և թե ալյուրով: Շուտով մեր ընկերության մեջ մտան ևս 12 տնտեսություն և 11-ից արդեն յեղան 23 տուն: Առանց զրասենյակի յեր մինում. նախագահի տան մի սենյակը վերածեցինք զրասենյակի, կոմյերիտ Վահանը, վորը վարչության անդամ եր, նստեց վորպես քարտուղար և ցուցակավար: Ենպես եյինք վոգեվորվել և գործի կպել կասես ծնած որվանից հենց սկսել եյինք կոլեկտիվ կերպով աշխատեր

— Քա, վճռյ, ինչպես եյինք առաջ առանձին առանձին աշխատում:

— Ել յես կոլեկտիվից դուրս աշխատել չեմ կարող — հաճախ լըս վում եյին այսպիսի արտահայտություններ կանանց մեջ:

Այս բոլորն անշուշտ գուր չեյին գալիս գյուղի կուլակներին և նրանց արբանյակներին, նրանք կոլեկտիվի անդամներին քարոզում եյին, վոր «կոլեկտիվը յերկու չի բռնել», «անդամներն իրար ոլուք պատեղով կցրվեն», անոթի ու մերկ կմնան և այն. զրանց նպատակն եր շփոթեցնել կոլտնտեսականներին և չթողնել վոր նորակազմ

կոլեկտիվն աճի և ամրանա: Բայց կուսքջիջից և գյուղխորհրդից գըրեթե ամեն որ մեզ մոտ յեկող ընկերները մեզ ոգնում եյին, մերկացնելով կուլակային տարրերի հակախորհրդային, հակակոլեկտիվին: տական արտքը և բացարում եյին մեզ կուսակցության վորոշումը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլտկի վերացումը վորոշես դասակարգ: Քանի գնում եր՝ կուլակները կատաղում եյին, ամեն կերպ փորձում եյին քանդել կոլտնտեսությունը: Նրանցից մի քանի սը մինչեւ անդամ փորձեր արին մտնել կոլտնտեսություն, վորպեսդի ներսից քայլայեն այդ բայց մենք կուսքիչի արթուն հսկողությամբ և ղեկավարությամբ հակահարված եյինք հասցնում նրանց, ավելի և ավելի ամրացնում մեր կոլեկտիվը:

Կոլեկտիվացման այիքը մեր լոոյի գյուղխորհրդում արդեն տարածված եր՝ 1929 թվի նոյեմբեր ամսից. չքավոր և միջակ գյուղացիությունը գյուղխորհրդի բոլոր գյուղերում կազմում եր կոչեկտիվ տնտեսություններ. մեր գյուղխորհրդուրդը համատարած կոլեկտիվացման ճանապարհն եր բռնել: Սոչիի ույոնում մեր լոոյի գյուղխորհրդը կոլեկտիվացման ամենաբարձր տոկոսներն ուներ՝ համեմատած ևյուտ գյուղխորհուրդների հետ: Դրա հետ մեկտեղ աճում եյին կուլակների խանգարիչ և վնասաբար դավերը. տեղակերպ նրանք խոսքից անցում եյին գործի. նրանք փշացնում եյին աշնանացանը՝ պատերը քանդելով և անտառներին թողնելով ցորենի արտը, կրակելով կոլտնտեսության խոտի գեղը և գաղտադողի փշացնելով կոլտնտեսության գութանի կամ այլ գործիքի այս կամ այն կարեվոր մասը և այն: Կուսքիջը և գյուղխորհուրդն ավելի ևս ուժեղացնում եյին իրենց հսկողությունը և ղեկավարությունը գյուղխորհրդի բոլոր կոլտնտեսություններում: Կոլեկտիվացման հենց առաջին որերից կուսքիջն ամեն մի կոլտնտեսության կծել եր մի կուսակցական ընկերոջ՝ մշտական հրահանգներ, ցուցմունքներ տալու և կոլտնահնության կաղմակերպչական աշխատանքներին ոգնելու:

Գյուղխորհրդի նախկին նախագահի սխալ քաղաքականության պատճառով մենք չկարողացանք անմիջանես հարկ յեղած հակահարվածը տալ մի քանի կուլակներին, նրանց աղղեցության տակից աղատել մի քանի միջակ տնտեսություններ և սրանց մեր կոլեկտիվը ներս քաշել:

IX.

Նույն տարվա նոյեմբերի 12-ն եր, ընկերության ընդհանուր ժողովը եր նշանակված՝ մենատնտեսների մասնակցությամբ. ընդունելու եյինք տնտեսական տարվա արտադրական պլանը, կային և ուրիշ կազմակերպչական հարցեր: Զեկուցելու համար յեկել եր գյուղխոր-

հրդի նախագահը, վոր չգիտեմ ինչու գեկուցումն սկսելուց առաջ հանդիսավոր կերպով ատրճանակը հանելով դրեց սեղանի վրա. յես վատ բան նախազգացի:

— Արտադրական պլանի մասին խոսելուց առաջ, յես պիտք և ասեմ,—սկսեց, զյուղխորհրդի նախագահը—ձեր գյուղը, վոր 76 տնից ե բաղկացած, լիովին կոլեկտիվացած չե. պլանն ընդունելուց տուածուրով չքավորներն ու միջակներն անպատճառ պետք ե անդամագըրվեն կոլտնտեսության մեջ. այնունետեղ բոլորի համար մենք կընդունենք պլանը:

Գյուղխորհրդի նախագահի այս ձեվի բռնի կոլեկտիվացումը ապշեցրեց և շնմեցրեց գյուղացիությանը. յեղան թեր ու գեմ խոսղներ, հակառակ խոսադներին իր ծոցատերում նշում եր գյուղխորհրդի նախագահը՝ յերբեմն շոշափելով իր ատրճանակը: Այս բանը նկատելով շատերը լրեցին: Ցերը նա քվեարկեց՝ ով ե ուզում մտնել կոլեկտիվի մեջ, գրեթե վոչ վոք ձեռք չբռք չբարձրացրեց. այնունետեղ նա քվեարկեց, ով հակառակ ե կոլեկտիվ մտնելուն, նույնական ձեռք չբարձրացավ. հետաքրքրական մոմենտ եր: Ի վերջո ասաց.

— Կոլեկտիվ չմտնողների հետ մենք ուրիշ կերպ կվարվենք. նրանց ձայնաղուրկ կանենք և կըշենք. փորփիետեր յեթե նրանք հակառակ են կոլեկտիվին, ապա ուրեմն հակառակ են խորհրդային իշխանության: Այսպես վերջացրեց զյուղխորհրդի նախագահը՝ ծոցատերում ինչ վոր գծմծելով և ատրճանակը հանդիսավոր կերպով կողեից կախելով:

Աղմուկի և իրարանցման տակ ընդունեցինք ծխախոտի պլանը—70 հեկտար և ձեմքակերպեցինք նոր 21 անդամների ընդունելությունը. զրանից հետո միաձայն վորշեցինք համայնացնել բոլոր խոշոր անտառները և գյուղատնտեսական արտադրական գործիջները:

Գյուղխորհրդի նախագահին, նման «քաջագործության» համար շուտով պաշտօնից հեռացըին: Մեր գյուղը սակայն, ինչպես քիչ հետո պիտի ասեմ, հարյուր տոկոսով կոլեկտիվացավ. բայց վոչ թե գյուղխորհրդի նախագահի ասածի նման, «անպատճառ», բանի կերպով, այլ գիտակցորեն և զգալով կոլեկտիվ տնտեսության առավելությունը: Այնպես, վոր ընկ. Ստալինի նամակից հետո, յերբ ուրիշ կոլտնտեսությունները ցատերը եյին գալիս կոլտնտեսությունից, մեղանուս վոչ մի տնտեսություն մեր կոլտնտեսությունից չհեռացավ, գուրս չեկավ:

Ընկ. Ստալինի նամակը մեր ընդհանուր ժողովում կարգացինք. կոմյերիտ վահանը մի առ մի բացարեց նամակի բոլոր կետերը, վորը վերաբերվում եր մեզ, կոլտնտեսականներին և վորտեղ ընկեր Ստալինը հասկացնում եր, թե ինչպես պետք ե կոլտնտեսություն

կազմել, ինչպես կոլտնտեսությունում աշխատել և այլն։ Այդ նամակից հետո մեր կոլտնտեսության կյանքում շատ բան փոխվեց։ Առաջին շրջանում ունեցած մեր մի քանի սխալներն ուղղեցինք. առանց հարմարություն ունենալու կովերը համայնացրել եյինք, համայնացրած խոտը ծախսում եյինք, բայց փաստորեն կովից ոգտվում եր վոչ թե միայն կոլտնտեսությունը, այլ կովի տերը, վորի մոտ գտնվում եր անասունը։ Կովերը թողեցինք իրենց տերերին։ Կոլտնտեսակոնների ընտանիքների համար բանջարանոցի վոչ մի սերմացու չեյինք թողել համայնացրել եյինք. հիմա արդեն ամեն մի ընտանիքին փորոշ նորմայով, ըստ իրեն ընտանիքի անդամների քանակի տրվում եր վորոշ հողամաս՝ բանջարանոցը համար և այսպես ուրիշ շատ բաներ։ Ընկեր Ստալինի նամակից հետո մեր կոլտնտեսությունում ավելի ևս գիտակից վերաբերունք առաջ յեկավ դեպի կոլտնտեսությունը և գեպի կոլեկտիվ աշխատանքը։ Ուգեր վոր կուսակցության ուղիղ զիջը խեղթյուրել եյին և սխալ քաղաքականություն եյին տանում, հեռացվեցին, և նոր զեկավար ընկերներն սկսեցին մեզ մոտ իրականացնել այն բոլորը, ինչ վոր ասում եր կուսակցությունը և ընկ. Ստալինը։

X.

Ռայոնից և կենտրոնից յեկած բանվար բրիգադներն ուղնում եյին կազմակերպչական գործը լավ հիմքերի վրա դնելու, այնպես վոր մեր արտելի ամուր հիմքերի վրա լինելը, համերաշխ աշխատանքը, բրիգադների և կուս բջիջի մասսայական բացատրական աշխատանքը պատճառ դարձան, վոր դուրս մնացած 32 տունն ել գրեթե միաժամանակ դիմում տվին մեր կոլեկտիվն ընդունվելու։ Դեռ այդ 32-ից բոլորին ել ընդունել չեր կարելի, վորովհետեւ նրանց մեջ կային հականեղափոխական ընտանիքներ, կուլակային տարրեր և այլն։ Այնպես վոր 1930 թվի հունվարի կեսերին արդեն մեր վյուղը համատարտ կոլեկտիվ եր, յեթե չհաշվինք մի թ տնտեսություն, վոր մենք չնշունեցինք մեր արտելի մեջ և վորոնց ապագայում հեռացրինք մեր կոլտնտեսության սահմաններից։

Շուտով կոլեկտիվը բաժանվեց 7 խմբակի. յես յեկրորդ խմբակումն եյի աշխատում. սկսվեց սոցմքումը, խմբակների մեջ, թե ով լավ և շուտ կկատարի իրեն տրված աշխատանքը. բացի յերիտա. սարդներից, ծերերն ել աշքի եյին ընկնում իրենց հարվածայնությամբ։ Յեզ յերը մայիսի 1-ին վարչությունը պարզեվատրում եր հարվածայիններին, սրանց մեջ կային բավական թվով տուարիքն առած մարդիկ, վորոնց հարվածային անունը նախաղահը կարգում եր ծափերի տակ։

Սոչիի կայարանի յերկաթուղային բանվորները մեր շեֆն եյին սկսած շիթիլանցի աշխատանքից սինչև ծխախոռի անկելու վերջը նրանք մեզ ոգնում եյին թե մշտական բրիգադներ ուղարկելով արտադրության մեջ մեզ ոգնելու և թե կուլտուրական - բացարական աշխատանք տանելով։

Մայիսի 1-ի որն եր. քաղաքից յեկած 50 հոգի յերկաթուղային բանվորները հետները բերել եյին մոտ հարյուր կտոր գրքեր, վոր նվիրեցին մեր դպրոցի զբաղարանին։ Այդ որն աշխատանքի որ եր. մեր շեֆերն ել մեզ հետ գնացին շիթիլանցոցում աշխատելու. շեֆերը 5—6 ական հոգի բաժանվեցին մեր խմբակների մեջ, և աշխատանքը կազմակերպված եր, հայտարարվեց մրցում առանձին խմբակների միջև և առանձին անհատների միջև. լավագույն հարվածայինները յերեկոյան պարգևատրվելու եյին։ Անսիջապես շիթիլանցը մասների բաժանվեց և ամեն մի խմբակ, անցնելով իլ համապատասխան մասը, սկսեց շիթիլանցի քաղանը։ Աշխատանքը յեռում եր. հանագի, ծիծաղի և ուրախ տրամադրության տակ իրար հետեւից մաքրվում եյին շիթիլանցի մարդերը։ Ամենից շուտ վերջացրեց ընկ. Սրտենի 2-րդ խմբակ, վորտեղ աշխատում եր յերկաթուղային բանվոր ընկ. Պոլշիկովը։ Սրանք սկսեցին ոգնել մյուս խմբակներին, շուտով գրեթե վերջացավ. դեռ բավական ժամանակ կար մինչև արեվի մայր մտնելը, յերբ ցրվեցինք տներ և ամեն մեկս պատրաստվեցինք յերեկոյան կայանելիք «Մայիս 1-ի» առթիվ հանդիսաւ, վոր յերեկոյաթին։

Յերեկոյաթին անցավ իսկապես վոր շատ հանդիսավոր կերպով։ Առաջ խրսեց կուսբջիջից յեկած ընկ. Առաքելը, վորը կանգ առավ Մայիսի 1 ի նշանակության վրա և խրսեց մեր ապագա անելիքների մասին։ Այնունետեւ խրսեց ընկ. Պոլշիկովը շեֆերի կողմից և խրստացավ այսուհետեւ ավելի ևս կրկնապատկելու իրենց ուշադրություն իրենց շեֆարկյալ կոլտնտեսության վրա, նրան թե նյութապես և թե բարոյապես ողնելու։ Խոստացավ մյուս անդամ գալուն հետը բելու ուղղությունիչ մեր կոլտնտեսության համար։ Խոսեցին մեզանից ևս Շուտով սկսվեց ինքնապօքունենյության յերեկո, վորին մասնակցեցին նաև մեր շեֆերը. ուրախ և ծիծաղաշարժ յերեկութը վերջացավ պարերով։

XI.

Ունենալով լավ զեկափառություն, ուժեղ դիսցիպլինա և գիտակից վերաբերմունք դեպի կոլեկտիվ աշխատանքը, մեր «կարմիր ապագան» լոոյի աշքի ընկնող կոլտնտեսություններից մեկն եր, վոր միշտ ժամանակին կատարելով ծխախոռի մշակման ամեն մի կամ-

Մեր առաջին տնտեսական տարվա հաջողությունը կատաղեցրեց դասակարգային թշնամուն՝ կուլակներին, վորոնք տեսնելով իրենց գուշակությունների ի դերև յենելը, ամեն կերպ աշխատում երին իրենց աղդեցության տակ առնել կոլտնտեսականներից մի քանիսին, պրոպաղանդա մղել կոլտնտեսությունից դուրս գալու համար և այդպիսով կոլտնտեսությունը քանդել: Յեղան և այնպիսիները, վորոնք ուայոնական մարմինների առաջ սկսեցին վարկաբեկել մեր կոլտնտեսությունները, թե իբր էկարմիր ապագան» կտրապում և պաղատուծական տարում հաջողությամբ մշակեց 85 հեկտար ծխախոտ, վորը ժամանակից առաջ հանձնեցինք մթերման կայանը:

Գալով մեր ապարատի ձեզին, կոլեկտիվ մտնելուց հետո յես սկսեցի մարդագովարի ապրել, կուշտ փորով հաց ուտել: Աղատ եյի արդեն սիրտ մաշող հոգսերից—թե, վայ, գութան չունեմ, հողս չըեր ե, սերմացու չունեմ և այլն: Առաջին կոլտնտեսականնատարին խաղ ու պարով վերջացրինք. 76 տնից բաղկացած մեր գյուղը, վոր առաջ հաղիվ հաղ 45—50 դեսյատին ծխախոտ եր ցանում, առաջին կոլտնտեսական տարում հաջողությամբ մշակեց 85 հեկտար ծխախոտ, վորը ժամանակից առաջ հանձնեցինք մթերման կայանը:

Հակառակ կուլակների և կուլակային գործակալների ասածներին, թե կոլտնտեսայինները վերջում անոթի յեն մնալու, տնտեսական տարվա վերջում պարզվեց, վոր կոլեկտիվի անդամներից շատերը կերածն ու խմածը հաշվելուց և առած արդյունաբերական ապրանքների արժեքը զուրս գալուց հետո, 200—300 մինչև 1000 ուրուի փող ստացան: — Ովես, ամաց հաշվապահ Սիդորենկոն. զուտ առնելիք ունե 375 ո. 26 կոպեկ:

Աչքերիս չեյի հավատում. յեղբայր, առաջ հոդիս դուրս կերպ, դիշեր ցերեկ կաշխատեյի և ծխախոտ հանձնելուց հետո թե մի 100—200 ուրուի պարտքով չմնայի՝ մեծ փառք եր, իսկ հիմա կերածդ խըմածդ քեզի ու մի 375 ո. 26 կոպեկ ել ստացիր ու քեֆ արա: Խոչ եք ինձ վրա կանգ տոնում. վերցնենք միջակ տնտեսության տեր Հովակիմին, վոր 6 աշխատող ձեռք ունենալով, կոլեկտիվ մանելուց առաջ իր տնտեսության տարեկան յեկամուտը 1500—2000 ուրուուց դեն չի անցել. մինչդեռ կոլտնտեսության առաջին տարվա վերջում Հովակիմը իր 12 հոգով լնտանիքի կերածը, խմածը հաշվելուց հետո, 1 265ուրու չեք ձեռքին դուրս յեկավ զրամեցյակից: Շատ քերն եյին, վոր առնելիք չունեյին և միայն 2 տնտեսություն չնշին զումարով տալիք մնացին:

Յեթե առաջին տնտեսական տարու մեր կոլտնտեսության մեջ աշխարի արժեքը 95 կոպեկից բարձր չեր, դա շնորհիվ այն հանդամանքի յեր, վոր նախ գործավարձի սիստեմով չեյինք աշխատում, հաճախ կիսատ ժամերն ել լրիվ աշխատանքի որ եյինք հաշվում և յեկրորդ, յեկամուի մթերային մասը և ստացվող արդյունաբերական ապրանքներն ըստ շնչի եյինք բաժանում և վոչ ըստ աշխատանքի վորակի և քանակի: Այս հանդամանքն առիթ տվեց մի քանիսին ժամանակ առ ժամանակ սիմուլիացիայով զրաղվելու, ժամանականդ սկիզբներում այդպիսիները «հաճախ հիվանդանում եյին»: Այդպիսիներին շուտով խելքի բերեցինք և մի յերկու անուղղելիներին ել տարվա վերջում կոլտնտեսությունից հանեցինք:


ՏԸՑ Յ 25 - 67

1931 թվի հունվարի վերջերին լսեցինք վարչության հին կազմի զեկուցումը և վերընտրեցինք նորը, անցկացնելով կազմի մեջ հակառակ կուլակային աղդեցության տակ դանվողների թեկնածուների, լավագույն հարվածային ընկերների: Յերբ նույն ժողովում վերջնականապես ընդունում եյինք յերկրորդ սոլեվիկյան գարնանացանի պլանը, կուլակների աղդեցության տակ ընկած կոլտնտեսականները՝ Մակարն ու Հովսեփին ուղում եյին վիճեցնել պլանը, վորպես «մեր ուժից վեր», ուղուցը և այլն: Մենք ի հարկե նրանց բերանը փակցինք և կուլակային գործակալների ոյինք չանցավ: Պանը ընդգունեցինք 5 հեկտար հանդիպականով (առաջարկվոծ եր 90 հ.):

Մենք ստիպված յեղանք դիմելու ուայոնական մարմիններին, վոր կուլակային տարրերին հեռացնեն մեր կոլտնտեսության սահմաններից. կոլտնտեսային Մակարին և Հովսեփին ել, վորպես յենթակուլակներ և անուղղելի ելեմենտներ, հանեցինք կոլտնտեսությունից:

Փեարգար ամսում անտառամաքրության պլանը վերջացնելու հետ միաժամանակ, կոլտնտեսությունը մաքրեցինք կուլակային տնտեսություններից՝ թվով 9, սրանց սեջ նաև հետոավոր ազգականիս:

Յերկրորդ կոլտնտեսական տարին անցյալի վորոշ փորձառությամբ եյինք սկսում. վոդեվորությունը կըկնապատիկ եր: Կոլտնտեսությունը մաքրելուց ու զեկավար սարմինը թարսացնելուց հետո արդեն մեր կոլտնտեսության աշխատանքները գնում եյին պլանաշափ, ժամանակին և գերակատարումով. լավ են աշխատում արաւորդական խորհրդակցությունը, վորը նախօր կազմում աշխատանքի պը-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

բան. կարդագիրը և հասցնում ամեն մի խմբակին. լավ եր և աշխատանքի հաշվառումը. ամեն մի խմբակ ուներ առանձին հաշվետարցուցակավար (առանց վարձատրության), վոր զրանցում եր առանձին ժամանակի մեջ ամեն մի կոլտնտեսականի ամենորյա աշխատանքի տեսակը, վորակն ու քանակը, վորը հինգ որ մի անգամ գրասենյակում հաշվվում եր, վերածվում աշխորի և գրանցվում կոլտնտեսային աշխորույցի մեջ:

Աշխատանքի լավ կաղապակերպված լինելու պատճառով, այս տարի արդեն 95 հեկտարն ավելի աշխատությամբ և ժամանակին տնկեցինք: Տեսնելու բան եր աշխատանքը, բայց ինչ աշխատանք: 70 տարեկան ծերունուց սկսած մինչեւ 7 տարեկան յերեխան մասնակցում եյին կոլեկտիվ աշխատանքին:

Աշխատանքին այդպիսի վերաբերմունք ցույց տալը, աշխատանքի լավ կաղմակերպումը և ծավալուն ոսցմքումն ու հարվածայնությունը ծխախոտի տնկման գործում հակա թափեր առաջ բերին: Առաջ ծխախոտը տնկելիս ժամանակի մի դժուի մասը ի զուր կորում եր, ջրի պակասության պատճառով, ջուր լցնողի (նույլապակ) և տնկողների քանակի համեմատաբար ավելի կամ պակաս լինելու պատճառով, այժմ հետեւելով «մարդիցիուսի անվան» կոլտնտեսության որինակին, մենք ամեն մի խմբակում բաժանվել եյինք 7 հոգուց բարկացած խմբերի, վորտեղ 4 հոգի տնկողներին մի հոգի ջուր կրող, մի հոգի ջուր լցնող և մի հոգի ծխախոտի տուները բաժանող շատ լավ բավարարում եյին, այնպիս վոր յերբեք ընդիշում չեր ստացվում և սովորական նորմա համարվող 3000-ի դիմաց, ամեն մի տնկող միշտին հաշվով 8000—9000 ծխախոտի տունկ եր տնկում: Ծխախոտի տնկման ժամանակ իր հարվածայնությամբ աշքի ընկազ դիրիգորյան ետքիկի խումբը, վորի տնկողները թահմաղյան լուսիկը, վարդանյան Հըուզը միշտ ել 10—12 հազար տունկ եյին տնկում որական:

XIII.

Հունիսի 11-ին եր, ծխախոտի վերջին հեկտարն եյինք տնկում նախագահն ու տնտեղարը մեղ մոտ եյին աշխատում. կեսորից քիչ անց վերջացրինք տնկելը: Կեցցեների բացականչության տակ նախագահը տնկեց վերջին տունկը և սիրվիչը (սրածայր փայտ, վորով տնկում են) գեպի վեր նետելով — Ովես, արի կաչենք, — առաց ինձ և մի ակնաթարթում մենք արտվարների ուրախ ծիծաղի ու քրքիջների տակ մենամարտում եյինք: Զգիտեմ հաջողաւթյունը ում կողմը կլիներ՝ յեթե չարաձձի տղաներից մեջը ցնցուցի մեջ մնացած ջուրը լցներ մեզ վրա և վերջ չտար հետաքրքության տեսարանին: Ցըլեցինք, հետեւյալ որը հանգստի որ եր հայտարարված, յերեկոյան կայանա-

լու յեր ընդհանուր ժողով, վորտեղ պիտի պարզեվարվելին հարվածային կոլտնտեսայինները և լավագույն խմբակը:

XIV

Հանգստի որն անցավ ուրախությամբ, յերգով ու պարովի կոլտնտեսայիններն ամբողջ որը հավաքված եյին պարոցի առաջ: Եեր՝ կու քեմենչէ սպասարկում եյին պարողների յերկսեռ խմբին. մի տեղ «թիթրեմեն» եր, մյուս տեղ «Սարի գըլը»*: Խսկական տոն. պետք ե ասեմ, վոր կոլտնտեսությունում վաղուց դադարել ենք կրոնական տոններ տոնելուց, զատիկն ու ծնունդն այլևս հիմք չունեն. մինչեւ անգամ կիրակին, վորպիս այդպիսին, գոյություն չուներ մեզ համար: Հանգստանում ենք 10 որը մի անգամ, կամ նայած աշխատանքի ընթացքին՝ 15 որը, յերբեմն ամիս մի անգամ իսկ այս հանգստի որը վերածվել եր խսկական տոնի. հանագ բան չե. ծխախոտի 9 հեկտարը տնկված, պրած եր, և մենք աշխատանքի առաջին հաջողության տոնն եյինք տոնում:

Վերջապես սկսեց մթնել. մի մեծ յերկաթի կտոր, վոր կախված եր յերկաթուղու կայարանի մոտ գտնվող ծառից, զանգի պաշտոն եր կատարում և հրավիրում եր բոլորին ժողովի: Կոլտնտեսականները քիչ-քիչ սկսում են հավաքվել. մինչեւ հեռավոր գրուպպաներից գան, քեմենչեն շարունակում եր իր կլլոցը: Ժամի 8-ի մոտերքը նախագահը բոլորին ներս հավաքելով ժողովն սկսեց. նա մի փոքրիկ հաղորդություն արագ ծխախոտի տնկելու մասին և մեր ապագա հերթական աշխատանքների մասին:

Ընկերներ, ասաց նա վերջում, մենք բոլորս ել հարվածային կերպով աշխատեցինք տնկման կամպանիայի ընթացքում: բայց մեր մեջ գտնվեցին այնպիսի ընկերներ, վորոնք աշքի եյին ընկնում իրենց աշխատանքի վորակով և նորմա գերակատարելով: Այդ ընկերները մեր աշխատանքի հերոսներն են. վարչությունը վորոշել ե նրանց անունը գրել կարմիր տախտակին և ամեն մեկին տալ 25-ական ուսուբի նվեր. ահա նրանք.—

1. Թորոսյան Մարիամ (60 տարեկան)
2. Կարապետյան Գրիգոր (70 տարեկան)
3. Մալիխայան Սիրաք
4. Սարգսյան Ռիանես (այսինքն յես)
5. Վարդանյան Հրանուշ
6. Թահմաղյան Լուսիկ
7. Գրիգորյան Խաչիկ

*.) Պարեց են.

Ժողովականների ուժեղ ծափահարությունների տակ հարվածայինները մոտենում ելին նախագահին և ստանում նվիրները: Դպրոցը վորոտաց մասնավանդ 60—65 տարեկան ալեվոր հարվածայինների անունները լսելիս: Այդ յերեկոյան պարգևվածորեցինք և մեր հաշվառահանդիպերին՝ որինակելի և բարեխիղ աշխատանքի համար:

— Ըսկերներ, — շարունակեց նախագահը, յերբ ծափահարությունները մի քիչ հանգստացան, — մենք ունենք հարվածային խնդեր ևս, զորոնցից լավագույնն ե 7-րդը, վորը 7-ի իր ամենորյա պլանը դերակատարել ե և թե ժամանակից առաջ իր աշխատանքը վերջացնելով ոգնել ե յուու խմբերին: Դարձալ ծափահարություն. նախագահը փոխանցիկ դրոշը բաց արեց և յերբ մի քիչ դահլիճում ծափահարությունը հանդարավեց, — ըսկերներ, — շարունակեց նա, — ի նշան հարվածային և լավ աշխատանքի՝ 7-րդ խումբն արժանանում է փախանցիկ դրոշի: յես հավատացած եմ, վոր նա հետագա աշխատանքների ընթացքում ևս բարձր կվահի այս դրոշը: իսկ մյուս խմբերը թողորինակ վերցնեն 7-րդից:

Ծափահարությունների տակ նախագահը հունձնեց փոխանցիկ դրոշը 7-րդ խմբի կոլտնտեսութիւնի Վարդանուշշին, վորը վերցնելով դրոշակը, ասաց. — «մենք սինչև հիմա աշխատել ենք հարվածային կերպով. այսուհետև ավելի ևս կը կիրակապատկենք մեր թափը և վոչ վոքի չենք դիմք այս կարմիր դրոշը»:

Այսուհետև նախագահը հայտնեց, վոր մեր հարեւան յերկու կոլտնտեսություններում ծխախոտի տնկումը չափազանց հետ և մնացել վոր մեր պարտականությունն ե ողնել նրանց՝ աշխատանքը ժամանակին վերջացնելու: Անմիջապես կաղմակերպեցինք յերկու բուժություն բրիգադ, մեկը՝ ընկեր Վահան Քեհյանի, մյուսը՝ ընկ. Խաչիկ Գրիգորյանի գլխավորությամբ, վորոնք հետեւյալ որն և յեթ դնալու ելին մեր հարեւան կոլտնտեսությունները ծխախոտի տնկմանն ողնելու: Այս ել վոր վերջացավ, ժողովը փակված համարվեց: Անմիջապես սկսեցին ինքնազործունեյության յերեկոն, վորը չափազանց ուրախ անցավ. մեկը յերգում եր, մյուսը վոտանավոր ասում. կոլտնտեսային Գրիգորը շատ ծիծողաշարժ կերպով ներկայացրեց, թե ինչպիս են մեզանուս յեզ քշում մի քանի յերիտասարդներ: Գրիգորը թեպետ ծիծաղաշարժ կերպով, բայց մատնանշում եր մի քանիսի անբարեխիղճ վերաբերմունքը դեպի աշխատող անասունները. ստիպեցինք վարչության նախագահին նույնպես յերգել: Լավ-վատ յես ել մի բան յերգեցի: Հովհաննես Մովսեսյանը շատ հրաշալի կերպով յերգեց առաջին խմբակի աշակերտների սովորած «Պապար-պապար» յերգը: Այսուհետև ասպարեզը նորից քեմենչելին: եր: Յերկարատես պարից հետո, բոլորս ցրվեցինք տները:

Ինչ յերկարացնեմ, ծխախոտի մշտկման հետևյալ աշխատանքներն ել նույն վագերությամբ վերջացրինք: Հունիսի կեսերից բաց արինք մեր մանկամասուրն ու մանկապարտեզը և յերեխայի պատճառով տանը մնացած կանանց 90 տոկոսին ներզրավեցինք արտադրության մեջ. շենքի անհարմարության պատճառով դժբախտաբար սեպտեմբերի մեջ փակիցինք մեր մասուրը: Այս տարի նոր շենքի կառուցումը՝ աշխատակատական աշխատանքից լավագույնն է արինք մասուրը: Բացի մասուրից, այս 1932 թվին կառուցում ենք ընդհանուր ճաշարան, վորի բացումը հարյուր տոկոսով կազատի կանանց՝ տնային աշխատանքից: Ճիշտ ե, նոր կենցաղին անցնելու ուղղությամբ աշքի ընկնող նվաճութեր չունենք, դեռ մասամբ շարունակում ենք հին ձեռվ ապրել, ոջախն ու «կըմպուրը»*) զեռ մնում են, բայց այս տարի արգեն թե վարչությունը և թե կոլտնտեսականներն իրենց ուղաղությունը դարձրել են նոր կենցաղին անցնելու գործին. մտադրություն ունենք ընդհանուր ընակարաններ շինելու:

Կուլտուրական կյանքի վրա առաջներումը շատ քիչ ուղաղություն եր դարձվում. հաճախ ստացված թերթերն ել առանց կարգալու մնում եյին: Շնորհիվ մեր յերիտասարդ ուսուցչունի ընկ. Հրանուշի ջանքերին, բաց արինք կարմիր անկյուն, վարտեղ հանգստի ժամերին հաճախ հավաքվում ենք, կարդում, զրույցներ անցկացնում և այս: Անդրագիտությունը վերացրինք լիովին, յեթե չհաշվենք մի 5—6 հոգի, վորոնք դեռ չեն կարողանում կարեւարդերել: Հիմի վերացնում ենք կիսագրագիտությունը. յես ու կինս հաճախում ենք կիսագրագետի լիկկայան: Այս 1932 թվի հունվարի 1-ից արգեն յերեկուցիներ, ներկայացութեր լինում են հաճախակի: Գլուխ չեկավ ուղիոյի գործը. յերկու տարի յես աշխատում ենք, բայց չենք կարողանում ձեռք ձգել, յերեկի մի որ ուղիո յել կունենանք:

Համեմատած անցած տարիների հետ, մեր կոլտնտեսայիններն անհամեմատ զարգացած են քաղաքականապես: Կոլտնտեսություն կազմելուց տասշակ մեր գյուղում վոչ մի կուսանդամ կամ թեկնածու չկարկար կոմյերիտ բջիջ մի քանի հոգուց բաղկացած են ել միայն տղաներ, ներկայում մեր կոլտնտեսության մեջ ունենք 5 կուսանդամ, 26 կուսանդեկնածու, իսկ կոմյերիտ բջիջն ընդդրկել ե իր մեջ կոլտնտեսային յերիտասարդության լավագույն հարգածայիններին, վորոնցից շատերն աղջիկ են: Հիմա մենք բացի տեխնիկական կիսագրագիտությունը վերացնելուց, մեծ աշխատանք ենք տանում և քաղաքակա-

*) Շղթա, գործ կախում են կաթսան:

Նապես ուժեղանալու, ամեն հինգ որը մի անգամ կանոնավոր կերպով
տեղի յէ ունենում քաղաքապետութիւնք:

Են, ինչ ասեմ. այժմ մեր աշխատանքը այնպիս և առաջ գնում,
վոր թե աշխատում ենք և թե սովորում. Մոռացա ասելու, վոր Ռու-
տովից դես մի 9—10 կոլտնտեսայիններ ունենք զանազան կուրսե-
րում սովորող.

Գալով այս 1932 թվի աշխատանքներին, պետք և ասեմ, վոր
յերկրային կուսկոմիտեյի, Յերկրողձկոմի և Յերկրային կոլտնտեմի-
ության փորոշումներից հետո մեր կոլտնտեսության կազմակերպչական
գործը հիմունիք փոխեցինք:

Փետրվարի 25-ին արդեն մեր կոլտնտեսության 1932 թվի ար-
տադրական-ֆինանսական պահանջման վերջնականապես պատրաստ եր՝
կոլտնտեսականների ընդհանուր ժողովում բազմակողմանի կերպով
քննված և հաստատված:

Մարտի 5-ին վերջացրինք անցած տնտեսական տարվա յեկամտի
բաշխումը. ընդհ. ժողովի փորոշումով կոլտնտեսայիններս ամեն մեկի
իրեն հասանելիք դումարի 50 %-ը ժամանակավորապես թողեցինք
կոլտնտեսության տրամադրության տակ՝ կոլտնտեսական ծխախո-
տագործական շինարարության համար. Մարտի սկզբներին վերընտ-
րեցինք մեր վարչության կաղմը, վորն և սկսեց կյանքում կիրառել
յերկրային մարմինների փորոշումները:

XVI

Այս տարի արդեն մեր կոլտնահառությունը բաժանված և ար-
տադրական բրիգանների. աշխատանքի ամեն մի ճյուղին կցված և
մի բրիգադ, վորին հանձնված և արտադրության այդ ճյուղին հարկ
յեղած դյուլատնտեսական գործիքները. ամեն մի բրիգադ պատաս-
խանատու յի իրեն հանձնված ճյուղի աշխատանքի վորակին ու քա-
նակին. բացի դրանից պատասխանատու յի նաև գյուղատնտեսական
ինքնառաջին, Այսպիսով վերանում և դիմացրկությունը աշխատանքի
ընթացքում. Ցեղ փորոշինեան բրիգադի ներսում ել ամեն մի անդամ
իր հերթին ամրացված և աշխատանքի վորոշ մասին և գյուղատնտե-
սական գործիքներից մեկին, փորոնց համար նաև պատասխանատու յի
բրիգադի առաջ, ուստի բրիգադների ներսում ևս դիմացրկությունը
վերանում է. Հասկանալի յի ուրեմն, վոր այս տարի մեր կոլտնտե-
սության մեջ աշխատանքի ամեն ճյուղերում խմբակային գործավարձի
հետ միասին կիրառվում և անհատական ուղղակի գործավարձ և ամեն
մի կոլտնտեսականի կատարած աշխատանքը գնահատվում և աշխա-
տանքի քանակի և վորակի համաձայն. Դրա հետ մեկտեղ այս տարի
մեր կոլտնտեսությունում կանոնավոր կերպով ստանում ենք մեր կա-
տարած աշխատանքի համար կանխավճար:

XVII

Անցած տարիներում կոլտնտեսականներիս կատարուծ աշխատանքը
վրեմբե վոչ վորի կողմից չեր ընդունվում. մի խոսքով՝ աշխատանքը
չեր ստուգվում, չեր պարզվում աշխատանքի խակական քանակին ու
փորակը: Հաճախ գրեթե աշխատողի բանավոր հայտարարության հիման
վրա խմբագրը զրանցում եր նցա աշխատանքը, այնպիս վոր. լավ
աշխատողն ու վատ աշխատողը հավասարապես եյին գնահատվում.
պարզ ե, վոր այսպիսի հանգամանքներում բարեխիդա աշխատողները
չեյին խրախուսվում: Այս տարի արգեն այդ բացն ել վերացնում
ենք, փորովհետեւ բրիգադների կտարած ամեն մի աշխատանքը ըն-
դունում և վարչությունը համապատասխան ակտով, վորակի գրվում
է կատարված աշխատանքի խսկական քանակը և վորակը, վորի հա-
մապատասխան ել դնահատվում է. Մի խոսքով, լավ աշխատեցիր,
լավ ել կստանաս: Բացի դրանից, յեթե բրիգադի աշխատանքը սահ-
մանվածից ավելի յեկամուտ տա, այդ դեպքում բրիգադը համապա-
տասխան պարզեցարվելու յի ե, ընդհակառակը, յեթե բրիգադի աշխա-
տանքի վորակի վատ լինելու պատճառով բերքի արդյունքը պահասի,
ապա բրիգադի յեկամուտն ել համապատասխան կերպով ստականելու
յի: Այս տարի առաջների պես չենք շոայլում աշխարերը. մեր վար-
չության նախագահը և ամսականով աշխատող մի քանի հրենց
աշխատավարձը (աշխարերով) ստանալու յեն համապատասխան իրենց
աշխատանքի, այնպիս վոր, համաձայն մեր ընդհ. ժողովի վորշաման,
նրանց աշխատավարձը կոլտնտեսության ընդհ. յեկամուտի 2 %-ից
բարձր չի լինելու. վորքան նրանք լավ աշխատեն և նպաստեն կոլ-
տնտեսության յեկամուի բարձրացնան, այնքան ել կրաքանակ նը-
րանց աշխատավարձը: Այս բոլորից հետեւմ ե, վոր մենք փոխեցինք
մեր հաշվառումը. համաձայն մեր կոլտնտեսության կամակերպչական
նոր ձեին, կատարվում է և հաշվառքը նոր ձեով. աշխատանքը գրան-
ցնիս համապատասխան գրքերում գրվում է կատարված աշխատանքի
թե քանակը և թե վորակը. այնպիս վոր զնահատում կատարելիս և
աշխարերը հաշվելիս գրասենյակում յելում են վոչ միայն աշխատանքի
նորմայից բայց քանակի, այլ և ըստ վորակի. ճիշտն ասած այս գործը
մեղանում մի քիչ կաղում, և մեր հաշվապահը Սիլորենկոյի հեռա-
նալուց հետո:

Ցավալին մեր կոլտնտեսության մեջ այն ե, վոր արտազնացու-
թյունը, փօխանակ կազմարերպվելու, ինքնահոսի յի մատնված. կոլ-
տնտեսայիններից վոմանք առանց հայտնելու և վարչության հետ
համաձայնեցնելու, զնում են այս կամ այն քաղաքը արդյունաբե-
րության մեջ աշխատելու. այս հանդամանքը մեր աշխատանքների
պլայնանոթյանը իւանգարում են: Այս հանդամանքի պատճառն
այն ե, վոր մեր վարչությունն այս ուղղությամբ բացատրական աշ-
խատանքը չի տանում և չի կանոնավորում արտադնացության գործը:

XVIII

Յ-րդ բոլեխիլյան գարնանացանին մենք դուրս յեկանք լավ կազ-
մակերպվում, լավ պատրաստված, բացի այն, վոր ամեն մի կոլտնտե-
սականի ամրացրել ենք աշխատող լծկաններից մեկին, վարչությունն

ամբողջ լծկանների վրա հոգ տանելու և նրանց կերը նպատակահարձար կերպով ոգաագործելու համար նշանակել ե կոլտնտեսական Կիրակոսին, վորը մեր կոլտնտեսության մեջ հայտնի յե դեպի անասուններն ունեցած բարեխիղ վերաբերմունքով ե լավ խնամքով, այնպես վոր այս տարվանից արդեն մեր լծկանների դրությունը շատ լավ ե և խնամքն՝ որինակելի: Մարտի սկիզբներին կատարված լծկանի և կերի ռայոնական ստուգումը պարզեց, վոր մեր կոլտնտեսությունն ապահոված ե լծկաններով և կերի ֆոնդով՝ ամբողջ գարնանացանի ընթացքում: Գյուղատնտեսական դրութիքների նորոգումը ժամանակին վերջացրել ենք, մեր դարձնոցը նորոգել ե և նորոգում ե հարեան կոլտնտեսությունների գյուղատնտեսական գործիքները և:

Թե լծկանի կողմից և թե գյուղատնտեսական գործիքների նորոգման աեսակետից կազմ ու պատրաստ լինելով և գարնանացանն իր ժամանակին սկսելու պատճառով, արդեն ապրիլի 1-ին ծխախոտի հերկը և միաժամանակ շիթիւանոցի բոլոր աշխատանքները վերջացրինք. ծխախոտի տնկելը, քաղհանը և մշակման հետազա աշխատանքներն ել ժամանակին կատարել ենք, միաժամանակ բուժսիրային բրիգադ ու զարկելով հարեան կոլտնտեսությունները: Մեր արտադրական պլանները կատարելով մեկտեղ, մենք ընդուած ենք նորոգային իշխանության և խորհրդային իշխանության առաջադրած քաղաքական-տնտեսական բոլոր կամպանիաներին: Անասնամթերումն առաջին քառամսյակում վերջացրել ենք, գյուղմիասնարկը ժամանակից առաջ վերջացրել ենք և 100 տոկոսով բաժանորդագրվելով «ավարտական տարվա» փոխառության, մեզ տրված առաջադրանքը գերակատարել ենք. միջոցների մոբիլիզացիայի գործում, առաջինը դուրս գալով, մեր կոլտնտեսությունն արժանացավ կարմիր զրոշի և մի քանի ընկերներ վորպես ֆինակտիվներ պարզեատրվեցին:

Կոլեկտիվ աշխատանքն որե որ արմատանում ե մեր մեջ, մենք բոլորս աշխատում ենք միասին. վորպես մի ընտանիք: Մեր հետագա աշխատանքների ընթացքում ևս, հետեւելով կուսակցության հրահանդներին, ամրացնելով մեր կոլտնտեսական կաղմակերպությունը, շարունակելով անխնա պայքարել կուլակային հավասարեցման, ծխախոտի կոնտրառանդայի, դիմազրկության դեմ և այէ պայքարում բարձրացնելով զիսցազինան և աշխատանքի արտադրողականությունը, կգերակատարենք միշտ մեր ծխախոտի պլանները և կտանք մեր պետությանը թե քանակով և թե վորակով լավ ծխախոտ:



Отв. редактор
А. Г. Иваньян
Техн. редактор
Г. М. Маркарян.

Дк-6

Сд. в набор 4/X-1932 г.
Сд. в печать 1/XII-1932 г.
Объем 1^{1/2} печ. листа
Тираж 2000 экз.

Уполномоченного № 0801 Газ.-ин. тип. СККПО. Статформат А5-148x210 Заказ № 5108-2759
Гор. Ростов на Дону.



9112 50 400
цена коп.

3207

29.7.43

На армянском языке

К. ГАРУНИ

ВСЕ КАК ОДИН

(Рассказы колхозника Овеса о
своем колхозе)

И во «СЕВЕРНЫЙ КАВКАЗ»

ԳՐԱԴԱՐԱՆ

ԴՐԱՅՈՒՑԴՐԱՆ ՄՈՒԿՈՎՈՎՈՎ ՓՈՂ 53
ԳՐԱԴԱՐԱՆ ԿԵՐՊՈՎԱՆԻՑ